ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ԵՎ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արշակ Ներսիսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պապ Արշակունի արքայի և Հայոց Առաքելական Եկեղեցու միջև Ներսես Մեծի մահից հետո եղած փոխհարաբերությունները, որոնք զարգացել են Պապի կողմից եկեղեցապատկան գույքի մեծ մասի պետականացման և Ներսես Մեծի ստեղծած հաստատությունները փակելու ուղղություններով, այն թյուր տպավորությանն են տեղիք տվել, որ նրանք լարված, ավելին՝ թշնամական վերաբերմունք են ունեցել միմյանց հանդեպ: Մինչդեռ իրականում Պապ թագավորը մինչև Ներսես Մեծի մահը (373 թ.) ոչ թե թշնամական, այլ ավելին՝ նույնիսկ բարեկամական հարաբերություններ է ունեցել քահանայապետի հետ: Ներսեսը նորից քահանայապետի գահին է բազմել հենց Պապի ցանկությամբ և ոչ մի սկզբնաղբյուրում չեն հիմնավորվում այն տեղեկությունները, որ վերջինս հալածել է Ներսեսին կամ գործել է ընդդեմ նրա: Ներսես Մեծի մահից հետո Պապի՝ Եկեղեցու հանդեպ որդեգրած քաղաքականությունը, որը միտված էր պետություն – եկեղեցի կապերի առավել ամրապնդմանը և նախատեսում էր եկեղեցական հողերի մեծ մասի պետականացում, ամենևին այն հայեցակարգին չի հանգեցնում, որ նա թշնամի էր Ներսեսին: Ներսեսը Պապի ժամանակ շարունակել է այն նույն գործունեությունը, որն իրականացնում էր Արշակի գահակալման շրջանում: Հոդվածում քննական վերլուծությամբ փորձ է արված ապացուցելու այս հայեցակետի ճշտությունը:

ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ԵՎ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պապ Արշակունին, որը հայ Արշակունի արքաների մեջ բացառիկ տեղ է զբաղեցնում իր քաղաքական պետականամետ մտածողությամբ և կենտրոնախույս ձգտումների դեմ ճկուն մարտավարությամբ, հայոց պատմության հերոսական կերպարներից լինելով, միաժամանակ, ինչպես իր հայրը, ողբերգական կերպար էր՝ պայմանավորված մի շարք

հանգամանքներով: Քանի որ նրա կառավարության կարճատև շրջանում (370-374 թթ.), փաստորեն, հաղթանակով է ավարտվում դեռևս Խոսրով Կոտակի ժամանակներից սկսված կենտրոնախույս ձգտումները չեզոքացնելու քաղաքականությունը և այդ քաղաքականությունը որոշ իմաստով ուղղված էր նաև Եկեղեցու դեմ, այն տպավորությունն է հասել ընդհանրության, որ շատ վատ են եղել նրա հարաբերությունները Ներսես Մեծի հետ, ավելին՝ վերջինիս թունավորելով կյանքից զրկել է հենց Պապ թագավորը: Բայց, կարծում ենք, որ սա այնքան էլ մոտ չէ ճշմարտությանը և նման պատմագիտական հայեցակարգերի համար հիմք է հանդիսացել այն քաղաքականությունը, որը նա իրականացրեց եկեղեցու հանդեպ 473 թ.-ից, այսինքն՝ Ներսես Մեծի մահից հետո: Ներսես Մեծի հետ նա գործել է համերաշխ՝ մինչև վերջինիս մահը: Իսկ եկեղեցական կալվածքների պետականացման Պապի քաղաքականությունը պետք է դիտարկել ոչ թե Եկեղեցու հանդեպ նրա ժխտողականության, այլ այն քաղաքական դիրքորոշման մեջ, որը նա որդեգրել էր հանուն իր պետականության հզորացման: Սա շեշտում ենք այն պատճառով, որ մասնավորապես վերջերս Պապի Ներսեսից հետո որդեգրած քաղաքականությունը հատուկ նպատակներով պայմանավորված շատ է շահարկվում և մատուցվում է որպես Եկեղեցու կամ հավատի դեմ հատուկ միտում՝ այն դեպքում, երբ Պապն ամենաջերմեռանդ քրիստոնյա պետական այրերից էր, Հայ Եկեղեցու անկախության սկզբնավորողը և այն հանգամանքը, որ նա Եկեղեցուց առգրավել է կալվածքներ կամ քանդել է Ներսես Մեծի հիմնած որոշ կառույցներ, պետք չէ պայմանավորել Եկեղեցու հանդեպ հատուկ բացասական վերաբերմունքով: Դա եղել է հատուկ պետական քաղաքականություն՝ ուղղված բոլոր այն նախարարների դեմ, ովքեր նպաստել են հայոց պետականության թուլացմանը, ավելին՝ նրա վերացմանը, որոնց մեջ հաստատ չպետք է փնտրել Ներսես Մեծին: Պապի և Ներսեսի համագործակցությունը՝ հանուն Արշակունիների հայոց գահին վերականգնման, սկսվել է Արշակի 2-րդի ձերբակալությունից հետո, երբ Ներսեսը ջանք ու եռանդ չի խնայել Պապին հայոց գահին նստեցնելու առումով: Իսկ արդեն գահակալ լինելուց հետո, թե ինչպիսի վերաբերմունք է ունեցել Պապը Ներսեսի նկատմամբ, հետևյալն է գրում Լեոն. “Դեռ անչափահաս մի պատանի, նա երևաց հայրենի ավերակների մեջ որոնում էր այնպիսի ուժեր, որոնք կարող էին նորից փոքր-ինչ ամրացնել Արշակունիների խարխուլ գահը: Իր հոր նման նա էլ առաջին իսկ քայլե-

րից հենվեց երկու ամուր պատվանդանների վրա – սպարապետության և կաթողիկոսության: Սպարապետը Վասակի որդի Մուշեղն էր, որը պարսիկների դեմ մղված պատերազմներում արդեն դրսևորել էր բավականաչափ հերոսություններ: Գալով կաթողիկոսության, Պապը դիմեց ամենից հեղինակավոր և ժողովրդական մարդուն՝ Ներսեսին: Հաշտություն կայացավ Լուսավորչի տոհմի և Արշակունիների մեջ: Ներսեսին չէր կարող չգրավել պատանի թագավորի անկեղծ հարգանքը դեպի իր անձը և նա նորից կաթողիկոսության գլուխն անցավ, նորից սկսեց երևալ արքունիքում: Մնում էր այնուհետև կազմակերպել երկրի ներքին ուժերը, ավելացնել նրա կենսունակությունը»[1]:

Այստեղից եզրակացությունը մեկն է՝ Պապը Ներսեսին վերականգնել է կաթողիկոսական գահին, չի առաջնորդվել նրա հանդեպ այն մոտեցումներով, որոնք կիրառում էր Արշակը, հաշտվել է նրա հետ և մեծ ակնածանքով է վերաբերել նրան:

Հարկավ, Լեոյի այս եզրակացությունների հիմքը Փավստոսն է, որը Ներսեսի մահվան մեջ Պապին հանիրավի մեղադրելով հանդերձ, դրանից առաջ չունի որևէ տող նրանց միջև եղած հակասության մասին: Եվ առհասարակ, պետք է ընդունել, որ Պապի պայքարը ոչ թե Եկեղեցու դեմ էր, այլ հանուն պետականության ամրապնդման բոլոր ուժերի միավորման համար, որում մեծ դեր ուներ Ներսեսը: Վերջինիս հարգելով էլ, նա նրա կենդանության օրոք ոչինչ չձեռնարկեց Եկեղեցու դեմ, իսկ մահից հետո ինչ որ արեց, բխում էր Հայոց Եկեղեցու ամրապանդման և ի նպաստ մեր քրիստոնեական հավատի ամրապնդման շահերի: Դեռևս Արշակի հրամանով Գնել Արշակունու սպանությունից հետո, կարելի է պնդել, որ թշնամական էին Արշակի և Ներսեսի հարաբերությունները: Բայց, որ դրանք դարձան բարեկամական Պապի գահակալության շրջանում, երևում է Փավստոսի հետևյալ տողերից, որոնք գրել է պարսիկների դեմ Ձիրավի ճակատամարտին նախորդող իրադարձությունների առիթով. «Ապա ինքը՝ Պապ թագավորը, գնում փնտրում, գտնում է Ներսես եպիկոպոսապետին Հայոց ավագանու հետ, աղաչում է նրան, որ հայր լինի բոլոր հայրերին, օգտակար խրատներով առաջնորդի և իրենց համար Աստծուն խնդրվածք անի: Մեծ ջանքերով նրան համոզեցին, որ նրանց հետ արքունական բանակը գնա, որովհետև դեռ Գնելի մահվան

[1] Լեո, Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Երևան, 1966, էջ 476:

ժամանակից մինչև Պապի թագավորության այդ ժամանակը նա արքունական բանակը չէր գնացել: Իսկ այդ ժամանակ նրան իրենց հետ տարան արքունական բանակը»[1]:

Այստեղից պետք է եզրակացնել, որ իրոք Ներսես մեծը Գնելի սպանությունից հետո իրեն հեռու է պահել թե՛ պետական, և թե՛ նաև եկեղեցական գործերից, փաստորեն հրաժարվել է կաթողիկոսական աթոռից, և Պապն է նրան վերադարձրել իր գահին: Կցկտուր փաստերը վկայում են, որ Ներսեսը չի հակադրվել Պապին, ավելին, նրանք գործել են համատեղ՝ արտաքին թշնամուն չեզոքացնելու համար, որում կարևոր դեր ուներ նաև Մուշեղ Մամիկոնյանը: Դրա վկայությունն է նաև հետևյալ նախադասությունը՝ "Ներսես Պարթևը, որ Արշակի ժամանակ վշտացել էր և թողել կաթողիկոսությունը, նորից գործի է անցնում»[2]: Անշուշտ, այստեղ խնդիրը վերաբերում էր երկրի արտաքին անվտանգության ապահովմանը: Փավստոսի մոտ կա բավական հետաքրքիր մի տեղեկություն, որը, թերևս, հետազոտողների կողմից ուշադրության չի արժանացել: Համաձայն դրա՝ Ձիրավի ճակատամարտից առաջ Պապ թագավորը չի վստահել Մուշեղին, և նրանց փաստորեն հաշտեցրել է Ներսես Մեծը: Երբ վերջինս Պապի հետ բարձրանում է Նպատ լեռան վրա, իսկ հայ – հռոմեական զորքերն իջնում էին պարսիկների հետ պատերազմի, Մուշեղը Ներսես Մեծի մոտ է բերում իր դրոշակն ու զենքը, որ վերջինս օրհնի և այնուհետև իջնի պատերազմի: Պապը մինչ այդ հետևյալն է ասում Ներսեսին. «Ես հիշեցի, որ Մուշեղը բարեկամ է պարսից Շապուհ թագավորին: Դա այն Մուշեղը չէ՞, որ պարսից Շապուհ թագավորի կանանց ազատ արձակեց ժանվարներով ու պահապան վաշտով: Այն էլ եմ լսել, որ պարսիկների հետ բանակցություններ ունի: Թող նա պատերազմ չմտնի»[3]: Մուշեղն այնուհետև խնդրում է Ներսեսին, որ բարեխոսի Պապի մոտ, բայց արքան անդրդվելի է մնում: Այդ ժամանակ Ներսեսը Պապին հետևյալն է ասում. "Թող քո կամքը կատարվի, բայց նախ պահանջի՛ր քո աջի վրա երդվել, որ մեզ չի դավաճանի, հետո արձակի՛ր, որ գնա պատերազմի»[4]: Այդպես էլ լինում է, և Մուշեղն արքայի աջը բռնելով երդ-

---

[1] Փավստոս, Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան,1968, էջ 230:

[2] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 254:

[3] Նույն տեղում, էջ 237:

[4] Նույն տեղում:

վում է. «Ես կապրեմ և կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները քո նախնիների համար…»[1]: Եվ իջնում է պատերազմի դաշտ:

Ինչպես համոզվում ենք՝ Ներսես Մեծը կարևոր դերակատարություն է ունեցել թշնամու դեմ երկու կարևոր այրերի հաշտեցման գործում: Ցավով պետք է արձանագրել, որ հետագայում Մուշեղը հակադրվեց Պապին՝ հատկապես նրա ինքնուրույն քաղաքականությանը հակադրվելով Հռոմի մեջ հայոց անվտանգության ապահովումը տեսնելը, նպաստելով Պապի չարանենգ սպանությանը:

Ձիրավի հաղթական ճակտամարտից հետո հայ պատմիչների մոտ հնարավոր չէ Պապ-Ներսես Մեծ հակասությունների մասին որևէ վկայության հանդիպել: Կարելի է ենթադրել, որ նրանք գործել են համախորհուրդ: Տրամաբանական հարց է առաջանում. եթե Ներսես Մեծը չի համակրել Պապին, ապա ի՞նչը կարող էր ստիպել նրան՝ նորից բազմեցնելու եպիսկոպոսապետի գահին: Ուրեմն, եզրակացությունը մեկն է՝ Ներսես Մեծը մինչև իր մահը ոչ մի առումով չի հակադրվել երիտասարդ արքային, որն էլ իր հերթին ոչ մի քայլ չի արել ի վնաս եկեղեցու, որը մեր կարծիքով պետք է պայմանավորել երկու հնարավոր հանգամանքով՝ 1. Ներսես Մեծը կողմ է եղել Պապի ճկուն քաղաքականությանը՝ միտված երկրի ամրապնդմանը, 2. Գտնվելով բավականին առաջացած տարիքում հեռու է քաշվել պետական գործերին միջամտելուց: Բայց այս երկրորդ տեսակետը կարող է վիճելի լինել, քանի որ այդ դեպքում ի՞նչն էր նրան ստիպում նորից բազմել քահանայապետի աթոռին: Մանավանդ, որ նա Արշակի գահակալության շրջանում կյանքի էր կոչել այն եկեղեցական կամ ծիսական բարենորոգումները, որոնք պետք էին քրիստոնեության առավել արմատականացման համար:

Հնարավոր է, որ հակասությունների չսրման տեսանկյունից կարևոր դերակատարույթուն ունեցած լինի Պապ թագավորի որդեգրած մարտավարությունը՝ կենտրոնախույս ձգտումներում չեզոքացման տեսանկյունից, որը բավականին ճկուն էր: Դրանում կարելի է համոզվել թեկուզ և Կամսարականների նկատմամբ նրա որդեգրած դիրքորոշման դիտարկմամբ՝ մի տոհմի, որին գրեթե որձակոտոր էր արել Արշակը՝ խլելով հողերը և Արտագերս ամրոցը: Պապը վերադարձրեց նրանց կալվածքները

[1] Նույն տեղում:

Սպանդարատին[1], բայց, իհարկե, պահելով Արտագերսը: Տեսակետ կա, որ Ներսես Մեծը Պապին հակադրվել է, երբ վերջինս փոխել է իր քաղաքական դիրքորոշումը Հռոմի հանդեպ և փորձել է դրացիական հարաբերություններ ստեղծել Շապուհ 2–րդի հետ: Այս առումով նա, իբրև թե, թեքվել է հռոմեասեր Մուշեղ սպարապետի կողմը: Այդ մասին հետևյալն ենք կարդում. "Թագավորը փորձում էր ըստ հնարավորին վերականգնել հայ-պարսկական դրացիական հարաբերությունները, որն առաջացնում էր Մուշեղ Մամիկոնյանի և Ներսես Ա կաթողիկոսի, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի, նրանց կողմնակիցների ու թիկունքում կանգնած հռոմեական գործակալների դժգոհությունը»[2]:

Հղված հատորի մեջ չի հղվում այն աղբյուրը, որտեղ մատնանշվում է, որ Ներսես Մեծը հարել է Մուշեղին: Հարկավ, հնարավոր է, որ հավատի տարբերության պատճառով նա ներքուստ խրախուսելի համարած չլինի այս քայլը, բայց կոնկրետ նրա դեմ լինելու մասին վկայող փաստեր չկան: Այս շրջանին վերաբերող գլխավոր աղբյուրը Փավստոսն է խոսում՝ Պապ-Ներսես հակասությունների մասին, բայց առանց կոնկրետ փաստերի, Պապին վարկաբեկելու համար: Եվ նա դա արել է Ներսեսի մահից հետո, քանի որ այն հայտնի քաղաքականությունը, որ որդեգրել է Պապը Եկեղեցու հանդեպ, եղել է ոչ Ներսեսի ժամանակ: Ահա, թե ինչ է գրում նա. «Իսկ հայոց Ներսես եպիսկոպոսապետը միշտ դիմադրում էր Պապ թագավորին, նրան նախատում էր և հանդիմանում ծանր փաստացի հանդիմանություններով, նրա բազմաթիվ չար գործերի պատճառով թույլ չէր տալիս եկեղեցու շեմքը ոտք դնել և ոչ ներս մտնել: Միշտ նրան նախատում, հանդիմանում, խրատում էր, որ կորստաբեր գործերից հրաժարվի, ուղղվի, շարունակ նրա հետ խոսում էր, որ ապաշխարության գա: Իսկ Պապ թագավորը ամենևին նրան չէր լսում, այլ դեռ հակառակվում էր նրան և հետը թշնամանում, նրա մահվանն էր սպասում ու ցանկանում էր սպանել, բայց հունաց թագավորի ահից նա չէր համարձակվում նույնիսկ նրան հայտնապես խոսքով անարգել կամ նրա դեմ խստություն բանեցնել, ուր մնաց սպանել»[3]:

Հարց է առաջանում, եթե Պապն իրոք ցանկանում էր սպանել Ներ-

---

[1] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 276:

[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 104:

[3] Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 256:

սեսին, բայց դա չէր անում՝ վախենալով Հռոմից, ապա, ի վերջո, ինչու, ըստ Փավստոսի, նա դա արեց: Ակնհայտ է, որ նրա այս գրածը շինծու է՝ մեր մատնանշած պատճառով պայմանավորված: Այստեղ միայն այն տեղեկությունը, որ վախենում էր Հռոմի կայսրից, կարող է այն եզրակացության տեղիք տալ, որ Ներսեսը հռոմեասեր էր, բայց չէ՞ որ համաձայն նույն Փավստոսի հենց Պապն էր նրան վերականգնել եպիսկոպոսական գահին: Բացի այդ, այս ամենին նախորդող տեղեկությամբ Փավստոսը վկայում է, որ Պապի ժամանակ էլ Ներսեսը շարունակել է իր նախկին գործունեությունը. «Իսկ հայոց Ներսես եպիսկոպոսապետը շինում էր հայոց աշխարհի բոլոր ավերված տեղերը, խնամում ու մխիթարում էր, դարմանում ու պահպանում էր բոլոր աղքատներին, բորոտների և աղքատների համար ապաստարաններ էր պատրաստում: Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերվածները նորոգում, բոլոր խանգարված կարգերը վերականգնում էր և ուղղում: Հայոց իշխանության սահմաններում նա շատացրեց (եկեղեցու) պաշտոնյաների թիվը, ամեն տեղ տեսուչ–եպիսկոպոսներ դրեց և միշտ ուշադիր հետևում էր իր տեսչության ու իշխանության գործերին, քանի դեռ ապրում էր»[1]:

Այսպիսով, եթե հավատանք Փավստոսին, ապա Պապը ոչ թե Ներսեսի կենդանության օրոք հակադրվել է նրան, այլ, ընդհակառակը՝ արգելք չի հանդիսացել նրա՝ Եկեղեցու ամրապնդման ուղղությամբ իրականացվող գործունեությանը:

Իսկ այն քաղաքականությունը, որը որդեգրեց Պապը Հայոց Եկեղեցու նկատմամբ Ներսես Մեծի մահից հետո, չպետք է դիտարկել հայոց քրիստոնեական հավատի և Եկեղեցու հանդեպ նրա որդեգրած թշնամանքի տեսանկյունից, այլ այն ընդհանուր քաղաքականության, որը նա որդեգրել էր հանուն կենտրոնաձիգ պետության ստեղծման, որը ենթադրում էր պետական գանձարանի հարստացում, բանակի հզորացում, ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Նա ոչ թե Եկեղեցու թշնամին էր, այլ պետության ամրապնդման ջատագովը, որում մեծ տեղ էր հատկացնում քրիստոնյա հավատին և Եկեղեցուն, որի անկախության հիմքը դրեց Ներսես Մեծի մահից հետո, ինչպես որ միավորեց և հզորացրեց Մեծ Հայքի թագավորությունը, բայց նրա հանճարեղ և խելացի գործունեությունը կիսատ մնաց հռոմեական ճղճիմ դավադրության հետևան-

[1] Նույն տեղում, էջ 254- 255:

քով, որոնք Հայքում ունեին իրենց գործակալական ցանցը՝ ի տարբերություն Պապի մահն իրոք տենչացող Ներսեսի: Բայց այս ամենի քննությունը մեկ այլ ուսումնասիրության թեմա է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոշարադրյալից գլխավոր եզրակացություններն են.

1. Պապ Արշակունին Ներսես Մեծի կենդանության շրջանում չի հակադրվել նրան, ավելին՝ նա է վերականգնել նրան հայոց քահանայապետի պաշտոնում:
2. Նրանք երկուսով մեծ դեր են ունեցել Ձիրավի ճակտամարտում պարսիկներին պարտության մատնելու գործում, որից հետո Պապը ձեռնամուխ է եղել կենտրոնաձիգ պետության վերականգնման իր ցանկությունների իրականացմանը:
3. Ներսես Մեծի գործունեությունը Պապ թագավորի կողմից երբևէ չի արգելվել, նրանք ունեցել են բարեկամական հարաբերություններ, և միայն նրա մահից հետո Պապի որդեգրած քայլերը Եկեղեցու նկատմամբ հիմք են հանդիսացել, որպեսզի հոգևորական պատմիչները խիստ թշնամական ներկայացնեն այդ հարաբերությունները:
4. Պապ թագավորի՝ Ներսեսի մահից հետո ունեցած գործունեությունը, միտված է եղել Հայ առաքելական եկեղեցու անկախացմանը, առավել հզորացմանը, եկեղեցի–պետություն կապերի ավելի սերտացմանը:

АНАЛИЗ ОТНОШЕНИЙ ПАПА АРШАКУНИ И НЕРСЕСА МЕЦА

Аршак Нерсисян

Ключевые слова *- царь Пап, Нерсес Великий, Аршакуни, государство, церковь, отношения, политика, центростремительное государство, церковное землевладение, Рим, Персия.*

Пап Аршакуни, являющийся одним из исключительно интеллигентных государственных деятелей в истории Армении, в течение своего короткого царствования (370-374 гг.) проводил гибкую внешнюю и внутреннюю политику. Она была направлена на восстановление могущества Великого Армянского царства, что в плане внутренней политики требовало устранения центробежных устремлений. Это стремление столкнулось и с церковью, ставшей достаточно мощной структурой во время священства Нерсеса Великого. После смерти последнего

политика папы в отношении церкви, в результате которой большая часть церковного имущества была национализирована, монастыри и другие учреждения уничтожены, а часть духовенства призвана в армию, привела к мнению, что отношения между Папа и Нерсеса были настроены враждебно. Между тем, в действительности этого не произошло, и серьезных фактов, подтверждающих это, нет. Напротив, именно царь Пап восстановил на престоле Нерсеса Великого, покинувшего место жречества после убийства Аршаком Гнела Аршакуни. Пап и Нерсес сыграли главную роль в организации битвы при Дзираве, где армянским полководцем был Мушег Мамиконян. Более того, до самой смерти Нерсеса Великого против церкви не было предпринято никаких действий, и только после его смерти всплыл распространяемый армянскими историками тезис о том, что они были врагами. Политика царя Папа в отношении церкви после Нерсеса Великого не должна отождествляться с его антихристианским характером. Наоборот, Пап сделал Армянскую церковь независимой и попытался сблизить государственно-церковные отношения. Эти вопросы рассматриваются в статье.

THE ANALYSIS OF RELATIONSHIP BETWEEN PAP ARSHAKUNI AND NERSES METS

Arshak Nersisyan

Key words *- the king Pap, Nerses the Great, Arshakuni, state, church, relations, politics, centripetal state, church land ownership, Rome, Persia.*

Pap Arshakuni, who is one of the exceptionally intelligent statesmen in Armenian history, conducted a flexible foreign and domestic policy during his short reign (370-374). It was aimed at restoring the power of the Great Armenian kingdom, which in terms of internal politics required the elimination of centrifugal aspirations. This desire also clashed with the church, which had become quite a powerful structure during the priesthood of Nerses the Great. After the latter's death, the Pap's policy towards the church, as a result of which most of the church property was nationalized, convents and other institutions were destroyed, and some clergy were drafted into the army, led to the opinion that the relations between the Pap and Nerses were hostile. Meanwhile, it didn't happen like that in reality and there are no serious facts to prove it. On the contrary, it was the king Pap who restored Nerses the Great to his throne , who had left the seat of priesthood after the murder of Gnel Arshakuni by Arshak. Pap and Nerses had the main role at organizing the battle of Dzirav, where the Armenian commander was Mushegh

Mamikonyan. Moreover, until the death of Nerses the Great, no action was taken against the church, and only after his death the thesis circulated by Armenian historians that they were enemies came out. The policy adopted by the king Pap towards the church after Nerses the Great should not be equated with his anti-Christian character. On the contrary, Pap made the Armenian Church independent and tried to bring the state-church relations closer. These questions are examined in the article.

Արշակ Ներսիսյան *- ԵՊՀ Հայոց եկեղեցու պատմության ամբիոնի ասպիրանտ*

Аршак Нерсисян *– аспирант кафедры истории Армянской церкви ЕГУ.*

Arshak Nersisyan *- Graduate student of YSU, Armenian Church History Chair*